ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

24.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ծառուկյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա055384)

Ա. Ստեփանյանի (լիազորագիր, տրված՝ 30.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.04.2019թ. թիվ 26/26-1/6879-2019 գրությամբ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 16.04.2019թ. թիվ 286 գրության հիման վրա, 25.04.2019թ. թիվ 26/26-

1/6879-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Աշխատանք» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աշխատանք» ՍՊԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աշխատանք» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 26.03.2019թ. հրապարակված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/56/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընկերությունը չի տեղեկացվել մասնակցության հայտի թիվ 2 հավելվածում տեղ գտած անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընկերությունը հայտերի բացման արդյունքները Armeps համակարգով նայելուց հետո նկատել է, որ Ընկերության աշխատակցուհին, որը կազմում է Ընկերության մրցույթային հայտերը, օնլայն ուղարկված գնանշման թվերում վրիպել է և մեկական զրո պակաս է նշվել, 1-ին չափաբաժնում 18 000 000 ՀՀ դրամ գնի փոխարեն նշվել է 1 800 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնում 12 000 000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 1 200 000 ՀՀ դրամ, որի հիման վրա էլ աշխատակցուհին ուղարկել է գնանշման թվերը, որոնք այդ թյուրիմացության պատճառով 10 անգամ ցածր են ստացվել:

Այդ կապակցությամբ Ընկերությունն անմիջապես նամակ է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հաշվի առնելով Ընկերության վրիպումը, Ընկերության մասնակցությունը նշված ընթացակարգին համարել անվավեր:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքի վրա, որ տրամաբանորեն հնարավոր չէ գնանշումը կատարել տասն անգամ ցածր գնով և իրականացնել նշված ծավալի աշխատանքները և դա իրոք սխալմունք է:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է ելնելով հումանիտար սկզբունքներից և որ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու դեպքում մեկ տասնյակ աշխատակիցներ կդառնան գործազուրկ և այդ իրողությունը և այն հանգամանքը, որ տրամաբանորեն հնարավոր չէր գնանշումը կատարել տասն անգամ ցածր գնով և իրականացնել նշված ծավալի աշխատանքները, Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Աշխատանք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/33 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2019թ. թիվ 286 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 26.03.2019թ. հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/56/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հրավերը, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 02.04.2019թ.: Հայտերի բացման նիստում Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գին է ներկայացվել «Աշխատանք» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա հավելված 2-ում (մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարություն) արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ 1-ին կետի «բ» ենթակետում գնման ընթացակարգը սխալ է նշված:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը (վերջնաժամկետ՝ 05.04.2019թ.): Սահմանված ժամկետում

Ընկերության կողմից անհամապատասխանությունը չի շտկվել: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/33 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/56/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշխատանք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 2 հավելվածում արձանագրվել է անհամապատասխանություն՝ 1-ին կետի «բ» ենթակետում գնման ընթացակարգը սխալ է նշված:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով 04.04.2019թ. ծանուցել է «Աշխատանք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով կայացված որոշմամբ «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.04.2019թ. թիվ 26/26-1/6879-2019 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 16.04.2019թ. թիվ 286 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/56/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Աշխատանք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 2 հավելվածում արձանագրվել է անհամապատասխանություն՝ 1-ին կետի «բ» ենթակետում գնման ընթացակարգը սխալ է նշված:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով 04.04.2019թ. ծանուցել է «Աշխատանք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետով կայացված որոշմամբ «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Աշխատանք» ՍՊԸ-ի Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածի 1-ին կետի «բ» ենթակետում «գնանշման հարցման» բառերի փոխարեն նշված է եղել «փակ նպատակային մրցույթի» բառերը, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվելուց հետո, չի շտկել:

Միևնույն ժամանակ ուսումնասիրելով վերոհիշյալ հավելվածում տեղ գտած վրիպակը, այնուամենայնիվ գտնում եմ, որ նշված վրիպակն էական չէ և չի կարող բավարար հիմք համարվել Ընկերության վարքագիծը գնահատելու, վերջինիս կողմից գնման գործընթացին շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Գտնում եմ, որ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.04.2019թ. թիվ 26/26-1/6879-2019 գրությամբ «Աշխատանք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**